

Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԿՈՅՄԵՐ



Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ վասն հաւատքի նահատակութեան օրինակները անպակաս են:

Այս օրինակներէն մէկն է՝ Հոռիփսիմէ անունով կոյս մը, որ յաջողեցաւ հաւատքի ոյժով դիմադրել եւ յաղթել իր օրուան թագաւորին՝ Տրդատին:

Ս. Հոռիփսիմէ քրիստոնեայ հաւատացեալ մըն էր, որ Հոռմի մէջ քրիստոնեաներուն դէմ կատարուած հալածանքներէն փախած էր ու կ'ապրէր Գայիանէ կոյսի գլխաւորած հաւատացեալ կոյսերու խումբին մէջ: Այս խմբակը հաստատուած էր Հնձաններ կոչուած տեղի մը մէջ, Վաղարշապատի շրջակայքը:

Հայաստանի այդ ժամանակաշրջանի թագաւորը՝ Տրդատ, տակաւին հեթանոս էր եւ ուզեց ամուսնանալ Հոռիփսիմէի հետ: Ան անշուշտ մերժեց, որովհետեւ չէր ուզեր կին ըլլալ կոպաշտ թագաւորին: Հոռիփսիմէի ժիտական կեցուածքին որպէս հետեւանք, թագաւորը սպաննել տրւաւ ոչ միայն Հոռիփսիմէն, այլեւ՝ անոր պետը՝ Գայիանէն եւ իր ընկերուհիները:

Եւ այսպէս է, որ նահատակուած այս 37 կոյսերը կոչուեցան Հոռիփսիմեանց կոյսեր ու անոնք կը յիշատակուին մինչեւ այսօր մեր եկեղեցիէն ներս:

ԳԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ



«Ահաւասիկ Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ»: (Յովհ. Ա. 29):

Ս. Աւետարանէն քաղուած համար մըն է այս, արտասանուած Ս. Յովհաննէս Մկրտիչի կողմէ:

Ոչխարն ու գառնուկը ընդհանրապէս խորհրդանիշ նկատուած են բարութեամբ ու անմեղութեամբ: Ամէն վայրկեան մատաղ դառնալու պատրաստ կենդանի է անիկա: Եւ Յովհաննէս Մկրտիչ մարգարէանալով կը գուշակէր, թէ Յիսուս որպէս Աստուծոյ Գառնուկը պիտի գոհուէր, պատարագուէր մարդոց մեղքերուն համար:

Գառն Աստուծոյ պատկերը, որպէս խորհրդանիշ՝ Քրիստոսի կը տեսնենք նշխարներու վրայ եւ կամ Ս. Սեղանի զանազան ծածկոցներու՝ դաստառակներու վրայ:

Ուշագրաւ երեւոյթ է, որ հայրապետական պատարագներու երբ Վեհափառ հայրապետը թափօրով եկեղեցի կ'առաջնորդուի, ամպիովանիին անմիջական առջեւ երկու սարկաւազներ կամ վարապետներ բռնած կ'ըլլան Գառն Աստուծոյն, գեղահիւս, ոսկեթել ասեղնագործութեամբ Վեհափառ հայրապետի հայեացքին դիմաց:



ԲՈՒ ԽՍՔԵՐ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 4 ՅՈՒՆԻՍ 2023 ԹԻՒ 23

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Գ. Թգ. 18.29-46: Դ. Թգ. 2.1-15: Յկ. 5.16-20: Ղկ. 4.25-30

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 4.25-30

Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայելի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկինքը չանճրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ռեւէ մէկուն չորկուեցաւ, այլ՝ դրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիս մարգարէի օրերուն Իսրայելի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

ՔԱԼԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Աստուածաշունչը կը հաստատէ, թէ «Նոյ Աստուծոյ հետ քայեց» (Ծն. 6.9): Աստուծոյ հետ քայել, կը նշանակէ Աստուծոյ հետ ապրիլ եւ անոր ընկեր դառնալ: «Աստուծոյ հետ քայեց» բացատրութիւնը ակնարկութիւն է այն մտերմութեան եւ մօտիկութեան, որ Նոյ ունէր Աստուծոյ հետ: Աստուծոյ հետ քայելը՝ Աստուծոյ հանդէպ կատարեալ հնազանդութիւն ցուցաբերել է: Դիւրին չէր Նոյին համար քայել Աստուծոյ հետ եւ վկայել անոր համար, երբ իր շրջապատի բոլոր մարդիկը կը քայէին ընդդէմ Աստուծոյ: Մեզմէ քանինն՞ը կրնան վկայել Քրիստոսի համար, երբ շրջապատուած են գՔրիստոս ծաղրող մարդոցմով: Ծաղրածու այս աշխարհին մէջ, քրիստոնեայ մարդը պէտք է համարձակութիւնը ունենայ ոտքի՝ կանգնելու Յիսուսի փառքին համար:

ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷ



Եղիա մարգարեն, Եբրայեցի ժողովուրդին ամենապիղծ թագաւորին՝ Աֆայի օրերուն, իբրեւ Աստուծոյ հաւատարիմ մարգարէ, բոլորին կոչ կ'ուղղէր դարձի գալու կենդանի Աստուծոյ: Ան մերժուած էր իր քաղաքացիներէն: Հակառակ այս վիճակին, ան չէր դադար իր նուիրական առաքելութենէն: Մարգարէին գլխաւոր մտահոգութիւնն էր մարդոց հոգիներէն փարատել անհաւատարմութեան մշուշը, որպէսզի հաւատքի լուսաշող ճանապարհէն ընթանան եւ առաջնորդուին դէպի արդարութիւն եւ աստուծապաշտութիւն:

Եղիա մարգարէն Տիրոջ տնօրինումով կը դրկուի Սամարիա՝ մոլորած ժողովուրդին մէջ հաստատելու գԱստուած պաշտելու անհրաժեշտութիւնը, որ երաշխիքն է փրկութեան: Աստուած Եղիա մարգարէին միջոցով ժողովուրդին մեծամեծ նշաններ ցոյց կու տար:

Տիրոջ հրամանով, Եղիա մարգարէն ժողովուրդը իր շուրջ հաւաքելով կը բարձրանայ Կարմեղոս լեռ, Բահաղի մարգարէներուն եւ ամբողջ ժողովուրդին ցոյց տալու, թէ Տէրն է միակ Աստուածը:

Տասներկու քար կը հաւաքէ, Յակոբի որդիներու ցեղերուն թիւով, եւ անոնցմով գոհասեղան կը սարքէ, վրան փայտ կը դնէ եւ հորթ կը գոհէ: Յետոյ կը հրամայէ գոհասեղանին վրայ. «Չորս սափոր ջուրով լեցուցէ՛ք, ու թափեցէ՛ք ողջակէզին վրայ եւ փայտերուն վրայ» (Գ. Թագաւորաց 18.34), ապա կը սկսի աղօթել:

Մարգարէին աղօթէն ետք երկինքէն կրակ կ'իջնէ, որ ողջակէզը, փայտերը, քարերն ու հողը կ'այրէ եւ ջուրն ալ կը սպառէ: Ժողովուրդը այս երեւոյթը տեսնելով, երեսի վրայ կ'իյնայ ու կ'ըսէ. «Յեովան է միակ Աստուածը» (Գ. Թագաւորաց 18.39):

Աւետարանին մէջ կը կարդանք, թէ Քրիստոսի այլակերպութեան ժամանակ Մովսէսն ու Եղիան կ'երեւին Յիսուսի:

Եղիա մարգարէն, իր կեանքի աւարտին, իրեն յաջորդ՝ Եղիսէ մարգարէի հետ Յորդանան գետին մօտ կը կանգնի եւ ահա հրեղէն կառք մը ձիերով զինք կ'առաջնորդեն դէպի երկինք: Ան իր վերարկուն կը ձգէ Եղիսէին, որպէսզի շարունակէ կատարել մարգարէութեան սուրբ պաշտօնը (Գ. Թագաւորաց 2):

Եղիա մարգարէի աստուածահանոյ կեանքը թող օրինակ դառնայ մեզի, որպէսզի մենք եւս կարենանք հաստատ փայլելով եւ ամրակուռ հաւատով ուղղուիլ դէպի Քրիստոս, որ իր լոյսով կը պայծառակերպէ մեր հոգիները, եւ կը խոստանայ բոլոր արդարները լուսաւորել ու արժանացնել երկինքի արքայութեան (Մատթէոս 13.43):

**ԲԱՐԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉ ՈՒԹԵԱՆ
ՏՕՆ ԵՂԻԱ ԱՆՈՒՆ
ԿՐՈՂՆԵՐՈՒՆ**

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ
ԵՐԿՈՒ ՁԵՒՈՎ Կ'ԸԼԼԱՅ

Մարդուն վերածնունդն ու նորոգութիւնը կրնայ տեղի ունենալ յանկարծ, վայրկեանի մը ընթացքին, եւ կամ երկար ժամանակի վրայ: Ամէն մարդ կը փափաքի, որ իր վերածնունդն ու նորոգութիւնը վայրկեանի մը կամ վայրկեաններու ընթացքին պատահի քան երկար ժամանակի մը վրայ: Աստուած սակայն կը ճանչնայ մեզ, կը ճանչնայ մեր ներքին անձը՝ սիրտն ու հոգին, եւ գիտէ թէ մեզի համար որ մէկը աւելի յարմար է, յանկարծական ու վայրկեանական նորոգութիւնը, թէ՛ երկար ժամանակի վրայ իրագործուող նորոգութիւնը: Պետքուս առաքեալին նորոգութիւնը երկար ժամանակի վրայ տեղի ունեցաւ, իսկ Պօղոս առաքեալին նորոգութիւնը՝ վայրկեանական էր:

ԱՍՏ ՈՒ ԱԾԱՇ ՈՒՆՉ

Սուրբ Հոգիով շարադրուած բոլոր Սուրբ Գիրքերը խորհուրդ ու դիտաւորութիւն ունին եւ երբեք զուր տեղ չգրուեցան, այլ՝ գրուեցան մեզի օգտակար ըլլալու եւ ուսուցանելու համար, որպէսզի անոնց միջոցաւ ճանչնանք Աստուծոյ սուրբ կամքը եւ չչեղինք ուղիղ ճանապարհէն, որ մեզ դէպի վեր՝ Աստուծոյ մօտ կ'առաջնորդէ:

Սարգիս Շնորհալի

**ԵՐԲ ՄԵՂՔԵՐՈՒ ԾԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ
ԶԳԱՍ, ԵՒ ՀՈԳԻԳ
Կ'ՊԱՍՏՈՒՄՈՒԹԵԱՐԹԵՐԻՆՎԱՌ
ԿԸ ՏԵՆՉԱՅ ԿԱՐԿ՝
ՍԱՂՄՈՍ 51**

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, դուն՝ որ այնքա՛ն ողորմած ես: Քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի: Ամբողջութեամբ մաքրէ՛ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ՛:

Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքէս չ'ելլեր: Քեզի, միայն քեզի՛ դեմ մեղանչեցի, Տէ՛ր, գործեցի այն՝ ինչ որ դուն չարիքը կը նկատես: Ուստի արդար ես՝ ի՛նչ վճիռ ալ արձակես, իրաւացի ես՝ ի՛նչ պատիժ ալ սահմանես: Արդարեւ, անօրէն եմ ծնունդէս ի վեր, մեղաւոր եմ մօրս յղութեան պահեն սկսեալ: Սակայն դուն, Տէ՛ր, որովհետեւ մարդուս սրտին մէջ ճշմարտութիւնդ կ'ուզես տեսնել, ծածուկ կերպով իմաստութիւնդ յայտնեցիր ինձի: Ուստի ներումիդ ցօղով սրբէ՛ զիս, եւ պիտի մաքրուիմ, լուս՛ զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ: Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի, եւ տառապած ոսկորներս պիտի ցնծան: Նկատի մի՛ առնէր մեղքերս, ներէ՛ բոլոր յանցանքներս:

Մաքուր սի՛րտ մը հաստատեմ մէջս, ո՛վ Աստուած, նոր եւ ուղիղ հոգի՛ դիր իմ ներսիդիս: Ներկայութենէդ մի՛ գրկեր զիս, Տէ՛ր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ՛ զիս: Փրկութեանդ ցնծութիւնը տուր ինձի, եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս, որպէսզի անօրէններուն տրվեցնեն քու կամքդ, եւ մեղաւորները քեզի՛ դառնան: